Հեր դիմումը Սահեմ

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ձեր դիմումը ՄԻԵԴ

Դատարան դիմելու կարգը և գործի վարույթը դատարանում

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Դատարանի Հանրության հետ Կապերի Բաժնի կողմից և որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Այն նպատակ ունի տրամադրել ընդհանուր տեղեկություններ Դատարանի աշխատանքի վերաբերյալ:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք ինտերնետային կայքում (www.echr.coe.int) Դատարանի Քարտուղարության կողմից տրամադրված փաստաթղթերին, մասնավորապես Դատարանի կանոնակարգին:

Դատարան ներկայացված դիմումների գերակշիռ մասն անընդունելի է հայտարարվում, ինչը նշանակում է, որ Դատարանը մերժում է դրանք, առանց նույնիսկ ուսումնասիրելու գործի էությունը, քանի որ դիմումները չեն բավարարում ընդունելիության չափանիշները: Դիմումներն անընդունելի հայտարարող որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Այսպիսով, եթե չեք ցանկանում, որ Ձեր դիմումը մերժվի Դատարանի կողմից, անհրաժեշտ է, որ այն բավարարի ընդունելիության բոլոր չափանիշները: Դիմում ներկայացնելուց առաջ, խնդրում ենք ծանոթանալ Դատարանի կայքում առկա տեղեկատվությանը, մասնավորապես՝ Գանգատի ընդունելիության ուղեցույցին:

ԴՈՒՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԳԱՆԳԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԴԱՏԱՐԱՆ

Դիմումի ձևաթուղթը կարելի է գտնել Դատարանի կայքի վրա: Այն հարկավոր է ներբեռնել, լրացնել ձևաթղթի բոլոր բաժիններն առանց բացառության և ուղարկել այն Դատարան՝ գործին առնչվող բոլոր փաստաթղթերի պատճենների հետ: Պետք չէ ուղարկել փաստաթղթերի բնագրերը, քանի որ դրանք Ձեզ չեն վերադարձվի գործի վարույթի ավարտից հետո: Մի դիմեք Դատարան ձևաթղթի օրինակ ստանալու համար: Այն ինքնուրույն տպելով՝ Դուք ժամանակ կշահեք, և կապահովեք, որ այն ժամանակին հասնի Դատարան (ծանոթացեք Դատարանի կայքին տեղադրված գործի հարուցման մասին Գործնական Ուղեցույցին և ձևաթղթի լրացման կարգին):

Եթե Ձեր դիմումը կիսատ է լրացված, ապա վտանգ կա, որ Դատարանը չի ընդունի այն, քանի որ անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով լրացնել ձևաթղթի յուրաքանչյուր բաժինը: Եթե դիմումի ձևաթղթի որևէ հատվածը պատշաճ կերպով լրացված չլինի, կամ տեղեկատվությունը բացակայի, կամ եթե անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները կցված չլինեն, Դատարանը կարող է մերժել գրանցել Ձեր դիմումը՝ առանց քննելու այն:

Դատարան կարելի է դիմել կա՛մ նրա երկու պաշտոնական լեզուներից մեկով՝ անգլերեն կամ ֆրանսերեն, կա՛մ էլ Եվրոխորհրդի անդամ պետությունների պաշտոնական լեզուներից մեկով:

Գործի վարույթի սկզբնական շրջանում հարկ չկա դիմել փաստաբանի օգնությանը: Սակայն, եթե որոշեք օգտվել փաստաբանի ծառայությունից, հարկավոր է Դատարան ուղարկել պատշաճ կերպով լրացված և ստորագրված փաստաթուղթ, որով կլիազորեք նրան ներկայացնել Ձեր շահերը Դատարանում:

Երբ լրացնեք ձևաթղթի բոլոր բաժինները, անհրաժեշտ փաստաթղթերի կրկնօրինակների հետ միասին, ուղարկեք այն հետևյալ հասցեով՝

The Registrar
European Court of Human Rights
Council of Europe
67075 Strasbourg cedex
France

Ցանկալի է դիմումս ուղարկել պատվիրված նամակով: Այն հարկավոր է ուղարկել ներպետական դատարանների կողմից ընդունված վերջին որոշման օրվանից չորս ամսվա ընթացքում: Դատարանը որպես հիմք է ընդունում ուղարկված ձևաթղթի ծրարի վրայի փոստային դրոշմակնիքի ամսաթիվը: **Հաշվի առեք, որ դիմումի ձևաթուղթը հարկավոր է ուղարկել միայն փոստով:**

Բոլոր պարագաներում խորհուրդ է տրվում դիմումն ուղարկել ներպետական դատական վարույթների արդյունքում վերջնական դատական վճիռը ստանալուց հետո **հնարավորինս շուտ:**

ԴՈՒՔ ՈՒՂԱՐԿԵՑԻՔ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆ

Ձեր դիմումը կհասնի Դատարանի Կենտրոնական Գրասենյակ, որը օրական մոտ 1,500 նամակ է ստանում: Նման մեծ թվով նամակներ ստանալու պատճառով Դատարանը չի կարող անմիջապես տեղեկացնել Ձեզ դիմումի ստացման մասին:

Մի զանգահարեք Դատարան տեղեկանալու համար, թե արդյոք Ձեր դիմումը հասել է, թե ոչ: Դատարանն ինքը Ձեզ հետ կկապնվի, եթե լրացուցիչ տեղեկատվության կարիք ունենա:

Կենտրոնական Գրասենյակը դասակարգում է նամակները և ուղարկում Ձեր դիմումը համապատասխան դատական բաժին, որը զբաղվում է տվյալ պետության դեմ հարուցված գործերով: Գերմանիայի դեմ ներկայացված դիմումը, օրինակ, կուղարկվի այն բաժին, որը զբաղվում է գերմանական գործերով, քանի որ տվյալ բաժնի աշխատողները գերմանախոս են և ծանոթ են այդ երկրի օրենսդրության հետ:

Ձեր դիմումին թվային համար կտրվի, և այն կուսումնասիրվի իրավաբանի կողմից: Սակայն, սա դեռ չի նշանակում, որ Ձեր գանգատն ընդունելի է համարվել, այն ընդամենը գրանցման փուլում է: **Եթե Դատարանը Ձեզ հետ կապնվի, Դուք պետք է պատասխանեք նշված ժամկետում, այլապես Ձեր գործը պարզապես կմերժվի կամ կոչնչացվի:**

Երբ Դատարանն ունենա անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը, այն կուսումնասիրի Ձեր գործը և Ձեր գանգատը կհատկացվի դատական միավորներից մեկին:

Գործի վարույթի ողջ ընթացքում, նույնիսկ եթե Ձեզ թվա, թե այն երկար է տևում, Դուք պետք է սպասեք, մինչ Դատարանը Ձեզ հետ կապի մեջ մտնի: Քանի որ Դատարանը տարեկան ահռելի քանակով դիմումներ է ստանում (ավելի քան 50,000) և քանի որ դրանից էլ ավել քանակով գործեր արդեն վարույթի մեջ են, Դատարանը չի կարող իրազեկել Ձեզ ստացված նամակների կամ փաստաթղթերի մասին կամ տեղեկացնել, թե մոտավորապես երբ Ձեր գործը կքննվի:

Գործի վարույթը Դատարանում իրականացվում է գրավոր տեսքով: Ցանկացած տեղեկություն, որ ցանկանում եք հայտնել Դատարանին, պետք է ներկայացնել գրավոր:

ՁԵՐ ԳԱՆԳԱՏԻ ՔՆՆՈՒՄԸ

1. ԴԱՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Երբ Դատարանն իր տրամադրության տակ ունի գործը քննելու համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը, ելնելով գործի բնույթից, գանգատը հատկացվում է Դատարանի դատական միավորներից մեկին՝ միանձնյա դատավորին, Հանձնաժողով կամ Պալատ:

- Եթե Ձեր գանգատը միանշանակորեն անընդունելի է, քանի որ չի բավարարում ընդունելիության որևէ չափանիշը, ապա այն կքննվի **միանձնյա դատավորի** կողմից: Վերջինիս կողմից ընդունված որոշումը վերջնական է, և Ձեզ այդ մասին իրազեկ կպահեն: **Գանգատի անընդունելիության վերաբերյալ որոշումս անհնար է բողոքարկել կամ դրա մասին լրացուցիչ տեղեկատվություն պահանջել: Դատարանը կփակի գործի վարույթը, իսկ հետագայում կոչնչացնի գործի փաստաթղթերը:**

- Եթե գործը բարձրացնում է այնպիսի կրկնվող խնդիր, որի մասին Դատարանն արդեն բազմիցս որոշումներ է կայացրել տվյալ պետության դեմ, ապա գործը կտրվի **3 դատավորից կազմված Հանձնաժողովի** քննմանը: Այս դեպքում Դատարանը Ձեզ կուղարկի գործընթացը բացատրող նամակ: **Կրկին՝ Դատարանն ինքը Ձեզ հետ կկապնվի, եթե կամ երբ դրա անհրաժեշտությունն առաջանա:**

- Եթե գանգատը կրկնվող հարց չի բարձրացնում, ապա այն կքննվի 7 դատավորից կազմված Պալատի կողմից: Պալատը նույնպես կարող է գանգատն անընդունելի հայտարարել, և այդ դեպքում ևս որոշումը կլինի վերջնական: Սակայն եթե գործն ընդունելի համարվի, ապա այն կքննվի ըստ էության: Մինչ այդ, սակայն, Դատարանը կտեղեկացնի գանգատի մասին տվյալ երկրի կառավարությանը՝ հնարավորություն տալով ներկայացնել նրանց տեսակետը վիճարկվող հարցի վերաբերյալ: Չնայած գործի վարույթի սկզբում պարտադիր չէ, որ Ձեր շահերը Դատարանում ներկայացնի փաստաբանը, սակայն այս փուլում արդեն դա պարտադիր կլինի: **Կրկին՝ Դատարանն ինքը Ձեզ հետ կկապնվի այս առիթով:**

- Հարկ է նշել, որ ոչ մի գանգատ երբևէ միանգամից չի հանձնվում քննության **17 դատավորից կազմված Մեծ Պալատ**, սակայն Պալատը կարող է գործի վարույթի իրավասությունը փոխանցել Մեծ Պալատ կամ, գործի վարույթի վերջնական փուլում, գանգատը կարող է փոխանցվել Մեծ Պալատ՝ կողմերից մեկի խնդրանքով: Գործի վարույթի իրավասության փոխանցումը Մեծ Պալատ հնարավոր է միայն այն դեպքում, երբ գանգատում այնպիսի լուրջ հարց է բարձրացվում, որն ազդում է Կոնվենցիայի դրույթների մեկնաբանության վրա կամ երբ առկա է Դատարանի կողմից նախկինում ընդունված որոշման հետ անհամապատասխանություն: Գործը կարող է տրվել Մեծ Պալատի քննությանը նաև կողմերից որևէ մեկի խնդրանքով՝ Պալատի կողմից որոշման ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում: Սակայն Դատարանը եզակի դեպքերում է դիմում այդ քայլին:

2. ՈՐՔԱ՞Ն Է ՏԵՎՈՒՄ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ:

Անհնար է ասել, թե միջինը որքան կտևի Դատարանի կողմից գործի քննումը: Դա կախված է գործի բնույթից, գործին հատկացված դատական միավորից, Դատարան տեղեկատվության ներկայացման արագությունից և շատ այլ հանգամանքներից: Դատարանը գանգատները քննում է որոշակի կարգով, հաշվի առնելով դրանց կարևորությունը և բարձրացված հարցերի հրատապությունը: Սա նշանակում է, օրինակ, որ ամենալուրջ գործերը կամ նրանք, որ բացահայտում են մեծամասշտաբ խնդիրներ առաջնահերթ կարգով կքննվեն, ինչը բացատրում է այն փաստը, թե ինչու Ձեր գանգատից հետո Դատարան ներկայացված որևէ այլ գանգատ կարող է քննվել Ձեր գործից առաջ:

3. ԴԱՏԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ

Դատարանը լսումներ է նշանակում Պալատի կամ Մեծ Պալատի կողմից քննվող քիչ թվով գործերի համար միայն (տարեկան մոտ 30): Եթե այն որոշի լսում կազմակերպել Ձեր գործի կապակցությամբ, Ձեզ այդ մասին կհայտնեն: Բոլոր լսումները տեսահանվում են և կարող են դիտվել Դատարանի կայքի վրա:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏԸ

Գործերը Դատարանում կարող են տարբեր ավարտ ունենալ:

1. ԳԱՆԳԱՏԸ ՄԵՐԺՎՈՒՄ Է

➡ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՉՆՉԱՑՎՈՒՄ ԵՆ

Եթե գործընթացի սկզբում Դատարանը Ձեզ հետ կապնվում է, իսկ Դուք չեք պատասխանում կամ պատասխանը չի ստացվում նշանակված ժամկետի սահմաններում, ապա Դատարանը կարող է համարել, որ Դուք չեք ցանկանում շարունակել գործի վարույթը և կարող է փակել գործը: Այս դեպքում փաստաթղթերը կոչնչացվեն, իսկ Դուք իրավունք չեք ունենա բողոքարկելու այդ որոշումը:

➡ ԳԱՆԳԱՏԸ ՀԱՆՎՈՒՄ Է ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ

Գործի վարույթի ավելի ուշ փուլում, երբ գանգատը հատկացվում է դատական միավորի, Դատարանը կարող է հանել գործը իր ցուցակից, եթե Դուք չպատասխանեք իր հարցերին սահմանված ժամկետում: Այն կարող է համարել, որ Դուք այլևս չեք ցանկանում շարունակել գործի վարույթը: Նման ավարտ է նախատեսված նաև բարեկամական կարգավորման կամ միակողմանի հայտարարության գործընթացների արդյունքում:

Հետևաբար անհրաժեշտ է, որ Դուք Դատարանին պատասխանեք առանց հապաղելու: Այդպիսով Դուք կերաշխավորեք, որ Դատարանը Ձեզ չի համարի գանգատի հանդեպ հետաքրքրությունը կորցրած դիմումատու և չի հանի Ձեր գործը իր ցուցակից:

➡ ԳԱՆԳԱՏԸ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ

Եթե գանգատը չի բավարարում Դատարանի ընդունելիության չափանիշներից որևէ մեկը, ապա այն կհայտարարվի անընդունելի և այդ որոշումը կլինի վերջնական:

2. ԴԱՏԱՎՃԻՌ Է ԿԱՅԱՑՎՈՒՄ

Եթե գանգատն անընդունելի չի հայտարարվում Դատարանի կողմից, ապա այն քննելուց հետ, Դատարանը կարող է եզրահանգել, որ Կոնվենցիայի դրույթների խախտում տեղի չի ունեցել, կամ հակառակը, որ Ձեր իրավունքները խախտվել են: Եթե խախտում գտնվի, Դատարանը կարող է Ձեզ փոխհատուցում նշանակել: Այնուհանդերձ, ի նկատի ունեցեք, որ Դատարանը ոչ մի պարագայում, անվավեր չի հայտարարի ներպետական դատարանի որոշումը:

Եթե դատավճիռը կայացվում է Հանձնաժողովի կողմից, ապա այն վերջնական է և բողոքարկելու հնարավորություն չկա: Պալատի դատավճիռը վերջնական է դառնում դրա ընդունումից 3 ամիս անց: Այդ 3 ամսվա ընթացում Դուք կամ կառավարությունը կարող եք խնդրել փոխանցել գործը Մեծ Պալատ՝ վերանայման: Հիշեք, սակայն, որ Դատարանը հազվադեպ է ընդունում վերանայման մասին դիմումները: Մեծ Պալատի վճիռները վեջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Երբ խախտում արձանագրած դատավճիռը վերջնական է դառնում, Դատարանն այն փոխանցում է Եվրոխորհրդի Նախարարների Կոմիտե, որը պատասխանատու է դատավճռի իրականացումը վերահսկելու համար: Դրանով ավարտվում է գործի վարույթը Դատարանում:

Եզրափակելով՝ Դատարան հայցադիմում ներկայացնելիս կարևոր է բավարարել ընդունելիության պայմանները: Հակառակ դեպքում, Դատարանը ստիպված կլինի մերժել Ձեր դիմումը առանց քննելու գանգատը:

Ավելին՝ երբ Դատարանը գանգատն անընդունելի է հայտարարում, այդ որոշումը վերջնական է, և Դուք այլևս չեք կարողանա վերաբացել գործը, կամ նույնատիպ գանգատ ներկայացնել Դատարան:

ԿԱՐԵՈՐ Է ԻՄԱՆԱԼ

■ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Դատարանում գործին առընչվող փաստաթղթերը մատչելի են հանրությանը: Եթե ցանկանում եք անանուն մնալ, Դուք պետք է նշեք այդ մասին դիմումի ձևաթղթում և բացատրեք, թե ինչ պատճառներով եք ցանկանում թաքցնել Ձեր ինքնությունը:

■ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Եթե Դատարանը համարում է, որ Ձեր դիմումն ընդունելի է, այն կփորձի հասնել համաձայնության՝ բարեկամական կարգավորման Ձեր և կառավարության միջև: Եթե դա հաջողությամբ չի ավարտվում, ապա Դատարանը քննում է գանգատը և վճիռ կայացնում:

■ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Եթե Դուք անհիմն կերպով հրաժարվեք բարեկամական կարգավորումից, Դատարանը կարող է հանել Ձեր գործն իր ցուցակից՝ կառավարության կողմից ներկայացված միակողմանի հայտարարության հիման վրա: Վերջինում նրանք ընդունում են Կոնվենցիայի խախտումը և ստանձն են առնում համապատասխան փոխհատուցում վճարել:

■ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Դուք կարող եք խնդրել կիրառել ժամանակավոր միջոցներ, եթե Ձեր կյանքին կամ առողջությանը լուրջ վտանգ է սպառնում՝ օրինակ եթե Ձեզ պատրաստվում են վտարել մի երկիր, որտեղ Ձեզ խոշտանգումների ենթարկելու վտանգ կա:

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

■ ԵԹԵ ԵՍ ԴԻՄՈՒՄ ԵՄ ԴԱՏԱՐԱՆ, ՆՇԱՆԱԿՈՒ՞Մ Է ԴԱ ԱՐԴՅՈՔ, ՈՐ ԵՍ ԱԶԱՏՎՈՒՄ ԵՄ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՃՌԻՑ:

Ոչ, Դատարան դիմելու փաստը որոշումը չի կասեցնում: Դուք պետք է ենթարկվեք ներպետական դատարանների վերջնական որոշումներին, նույնիսկ եթե հայցադիմում եք ներկայացնում Ստրասբուրգի Դատարան:

■ ԿԱՐՈ՞Ղ է ԴԱՏԱՐԱՆՆ ԻՆՁ ՕԳՆԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ԳՏՆԵԼ:

Ոչ, չի կարող: Կապնվեք Ձեր տեղական Փաստաբանների Պալատի հետ և խնդրեք նրանցից անդամների ցուցակը:

■ ԿԱՐՈ՞Ղ է ԴԱՏԱՐԱՆՆ ԻՆՁ ՕԳՆԵԼ ԼՐԱՑՆԵԼ ԴԻՄՈՒՄԻ ՁԵԱԹՈՒՂԹԸ:

Ոչ, չի կարող: Դատարանը պետք է գործի վարույթի բոլոր փուլերում չեզոք մնա: Այդ պատճառով, այն կարող է ընդամենը առաջարկել Ձեզ ծանոթանալ դիմումի ձևաթղթի փաթեթին, որ կարող եք գտնել Ինտերնետում: Այն պարունակում է ողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը, որ Ձեզ անհրաժեշտ են դիմում ներկայացնելու համար:

■ ԿԱ՞Մ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ:

Այո: Այնուհանդերձ, Դուք չեք կարող ֆինանսական օգնություն խնդրել գործի վարույթի սկզբնական փուլում, այլ միայն երբ գանգատի մասին տեղեկացվի կառավարությանը: Հարկ է նշել նաև, որ ֆինանսական օգնությունն ավտոմատ չի տրվում բոլոր նրանց, ովքեր այն խնդրում են:

■ ԵԹԵ ԱՆՁԱՄԲ ԳՆԱՄ ԴԱՏԱՐԱՆ, ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԻՆՔՍ ԲԱՑԱՏՐԵԼ ԻՄ ԳՈՐԾԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՆՇԱՍՏԵԼ ԴՐԱ ՇՈՒՏԱՓՈՒԹԹ ՔՆՆՄԱՆԸ:

Ամենևին: Դատարանում գործի վարույթն իրականացվում է գրավոր կերպով, հետևաբար Դատարան այցելելը ոչ մի իմաստ չունի: Դա ժամանակի կորուստ է:

■ ԿԱՐՈ՞Ղ Է ԴԱՏԱՐԱՆՆ ԻՆՁ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ:

Դատարանի իրավասության մեջ չի մտնում իրավաբանական խորհրդատվություն տալ այն մասին, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել Ձեր երկրում: Ինչ վերաբերում է Ստրասբուրգի Դատարանում գործի վարույթին, ամեն ինչ մանրամասնորեն բացատրված է Դատարանի կայքում տեղակայված տեղեկատվական փաստաթղթերում: Դատարանը չի կարող Ձեզ հայտնել, թե որքանով Ձեր գործը կհաջողվի, հարկավոր է սպասել մինչև որոշման ընդունումը:

■ ԿԱՐՈ՞Ղ Է ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՈՐ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ Է ԻՄ ԳԱՆԳԱՏԸ:

Ոչ: Դատարանը ոչինչ չի ձեռնարկի այն իշխանությունների հանդեպ, որոնց դեմ Դուք գանգատ եք ներկայացրել: Հազվադեպ դեպքերում, սակայն, այն կարող է դիմել երկրի իշխանություններին, որպեսզի նրանք որոշակի միջոցներ ձեռնարկեն կամ ընդհակառակը չձեռնարկեն, քանի դեռ գործը քննվում է Դատարանում (հիմնականում սա վերաբերում է այն դեպքերին, երբ դիմումատուին լուրջ ֆիզիկական վտանգ է սպառնում):

■ ԴԱՏԱՐԱՆԸ ՔՆՆԵ՞Լ Է ԱՐԴՅՈՔ ԻՄ ԳՈՐԾԻ ՆՄԱՆ ԳՈՐԾԵՐ:

Դատարանի վճիռները հրապարակվում են իր ինտերնետային կայքի վրա: Դուք կարող եք փնտրել և տեսնել կան արդյոք կայացված որոշումների շարքում Ձեր գործի նման գործեր:

■ ԵԹԵ ԻՄ ԳԱՆԳԱՏԸ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ, ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԱՐԴՅՈՔ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ԱՅԴ ՈՐՈՇՈՒՄԸ:

Անընդունելիության մասին որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն: Այս հանգամանքը ցույց է տալիս, թե որքան կարևոր է, որ դիմումատուները Դատարան դիմելիս բավարարեն ընդունելիության չափանիշները:

■ ԻՆՉՊԵ՞Ս Կ ԿԱՐՈՂ ԵՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ԻՄ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Դատարանը չի կարող պատասխանել Դատարանում քննվող գործերի ընթացքի մասին բոլոր հարցումներին: Քանի որ գործերը քննվում են գրավոր կերպով, Դատարանը Ձեզ հետ կկապնվի լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու կամ այլ գործընթացների կապակցությամբ: Տեղեկատվություն կարելի է գտնել նաև նրա ինտերնետային կայքի վրա (կոմունիկացիայի, կողմերին տրվող հարցերի, գործի ընդունելիության մասին որոշման վերաբերյալ և այլն):

Ձեր դիմումը ՄԻԵԴ

Դատարան դիմելու կարգը և գործի վարույթը դատարանում

European Court of Human Rights
Council of Europe
67075 Strasbourg cedex
France

www.echr.coe.int

HYE

Design © ECHR · Photo © Shutterstock